ՕԾՎԵՑ ԱՐԵՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ԵԿԵՂԵՑԻՆ

Սեպտեմբերի 28-ին Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսն այցելեց Վայոց Ձորի մարզ՝ օծելու Արենի գյուղի վերակառուցված Սբ. Աստվածածին մատուռի Սբ. Սեղանը: Սրբազան հայրերի՝ Արգենտինայի թեմի առաջնորդ Տ. Գիսակ արք. Մուրադյանի, Այուցյաց թեմի առաջնորդ Աբրահամ եպս. Մկրտչյանի, Տաթև արք. Սարգսյանի և Վիգեն եպս. Այքազյանի մասնակցությամբ օծվեցին նաև մատուռի չորս ավետարանիչներին խորհրդանշող չորս սյուները: Այսուհետ 14-րդ դարի այս մատուռը, որը հղացել է Մոմիկ ճարտարապետը, կդառնա գործող մատուռ: Մինչ Ս. Սեղանի օծումը, խորանում տեղադրված վեմ-քարի առջև Տաթև սրբազանը մատուցեց նաև առաջին պատարագը:

Մատուռի օծումից հետո տեղի ունեցավ բազմամարդ հանդիսություն, որին ներկա էին նաև արտասահմանյան բազմաթիվ հյուրեր:

«Բազմաթիվ եկեղեցիներ ենք վերանորոգել իմ գործունեության տարիներին, բայց այսպիսի համաժողովրդական հանդիսության առաջին անգամ եմ հանդիպում», - դիմելով մասնակիցներին ասաց Հուշարձանների Պահպանության Հայկական Ընկերության նախագահ ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանը, որի ղեկավարությամբ Եղեգնաձորում վերականգնվել են նաև այլ եկեղեցիներ՝ Գնդեվանքը, Սբ. Կարապետ եկեղեցին և այլն: Ներկայումս վերականգնվում է Նորավանքի գլխավոր եկեղեցին՝ Սբ. Աստվածածինը:

Շնորհակալություն հայտնելով մատուռի վերականգնման համար, Արենի գյուղապետ Միքայել Գրիգորյանը կարևորեց նաև ծխական համայնքների վերականգնումը, «որպեսզի ժողովուրդն իր հոգևոր ծարավը հագեցնելու համար ստիպված չդիմի օտարամուտ քարոզիչներին», - ասաց գյուղապետը:

«Այսօր ես ուզում եմ, որ նայեք տաճարի գմբեթին և նրանից քաղեք ձեր նախնիների հավատքը և միշտ կապված մնաք եկեղեցուն», - ներկաներին իր պատգամը տվեց Վեհափառ Հայրապետը՝ բարձր գնահատելով Հուշարձանների Պահպանության Ընկերության և շինարարների աշխատանքը: Վեհափառ Հայրապետը մատուռին հանձնեց Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից տարված մի սկիհ: Մատուռին վերադարձվեց նաև տարիներ առաջ կորսված և վերջերս վերագտնված զանգը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը մատուռի մերձակա գերեզմանատանը թաղված հինգ ազատամարտիկների համար հոգեհանգստյան կարգ:

Նույն օրը Վեհափառ Հայրապետի օրհնությամբ տեղի ունեցավ նաև Արենի գյուղի խմելու ջրի ջրատարի բացումը՝ կառուցված Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի Հայ Օգնության Ֆոնդի հովանավորությամբ:

Նորին Սրբությունն այցելեց նաև Նորավանքի վերակառուցվող Սբ. Աստվածածին եկեղեցի՝ ծանոթանալու ընթացող շինարարական աշխատանքներին, որը նախատեսվում է ավարտել եկող տարվա ամռանը:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ